

Ի

ՀՆԳԵՏՍՍԱՆԵՐՈՐԿ ՀԱՐԻԻՐԵՍԿ

ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՆ

ԳԻՒՏԻ ԳՐՈՑ

ՀԱՅԿԱԶՆԵԱՆՍ ԲԱՐԲԱՌՈՑ

Կ Ո Ր Ի Ի Ն Ա Կ Ա Ն Մ Բ Մ Ո Ւ Ն Ձ Ք

Ասքանագեան՝ ունկն ինձ դուք զարմ թորգոմայ մատուցէք.  
 Գրիգորեան սուրբ շառաւիղն, աստուածայինըն Մհարովպ  
 Դիմէ, լինի ի խընդիր գրոց մայրենի բարբառոյս.  
 Այլ ինչ ի գլուխ բնաւ չելցէ, թէ չէ Բարձրալըն խնամող:  
 ՅԱյրարատայն ի գագաթանց, սրացեալ գուարթուն օղապար  
 Այն որ երբեմն զօրացոյց, ամենակալ Աջովն Տեառն  
 Զախոյեանըն հաւատոյ, զազգիս գլուխ թորգոմեան  
 Զլին զկամս ի գլուխ հանել՝ գայ հասանէ շուտափոյթ  
 Յանոյշ ի քուն հանգըստեալ, ի սիրտ մաքուր Մհարովայն  
 Դրոշմէ զտառս բաղցրահընչիւն ըզցանկալիւն ի բազմաց:  
 Ո՛վ մեծդ Մհարովպ քաջաբան, զարթի՛ր զարթի՛ր խօսնակ սուրբ  
 Ահա զըղծից քոց տենչանս, ելից խնամողն արարիչ:  
 Ո՛հ բանի՛ բիւր խընդութիւն, յաստուածատուրն ի պարգև  
 Զընաշխարհիկ ընդ իւր բաղդ, ցընծայ և զոյգ ազգն ողջոյն  
 Օրհնութեանց երգք հրոչակին ի զրմբեթարդ շքեղ տաճարս  
 Ամենեցուն սիրտ ամբիծ, լրցեալ ամբաւ եռանդեամբ.  
 Հնապա Մհարովպն ի գործ ժիր ընդ սուրբ մեծին Սահակայ  
 Յաստուածատուրն ի շընորհ կըրթել զմանկունըս մատաղս.  
 ԶՀելլենացոց, զԱսորոցն՝ զօտարն յեղու ի հայ բան:  
 Ահա յափունս Ելլաղայ դրոյթ տըւեալ հասանեն  
 Հայոց մեծաց սուրբ բողբոջք, մեղուք ժրաջան իմաստունք  
 Ի ժողովել անագան զճաշակ բանից գիտութեան.

Զերդ աղանիբ հեզաթոխչ ի տապանէն արձակեալը  
 ԶԱթենասայն մեզ բերեն շիւղ ձիթենւոյն դալարի։  
 Այն ինչ փութով ամփոփեալ զնեկտար ծաղկանց բաղցրարոյր  
 ի հայրենիս մեր դառնան, գսերմն գիտութեան ծաւալեն  
 Զիմաստնալից բանրս պերճ, Աթենացւոց մեծահոգակ  
 Այն որ դ' հանուր տիեզերս հրոչակ հարեալ էր մեծ յոյժ։  
 Հապ'օն ի սուրբ յայս հանդէս, յօրինեսցուք պսակս անեղծ  
 Գնել ի գլուխ սուրբ թարգմանչացս լուսաւորչաց ազգիս մեծ.  
 Ելցեն ընդ ծուէնս ծիածան ծիրանաներկ ամպոց նուրբ  
 Բուրմուռնք անոյշ օրհնութեանցս, սլասցին դ' այերս ի յերկինս.  
 Անուանք անմահք պաշտելիք, օծեալք ցօղով օրհնութեան  
 Սըփոնեջիք ևս այժմ առատ, շքնորհաց շիթս հոգեզմայլ.  
 Կեցջիք Մեսրովպ և Սահակ, ի տաճարիս սրբազան  
 Երկնահանգոյն ջահը պայծառք, ցարդ պահեալք վառ ցոլացեալ։